**<u>Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի իրագործման թեմայով սեմինար-քննարկում</u>**
**<u>Երևան, 11-12-ն ապրիլի, 2013 թ.</u>**

<u>Եզրակացություններ</u>

Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի իրագործման թեմայով սեմինար-քննարկումը կազմակերպվել էր ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից՝ Եվրոպայի խորհրդի համագործակցությամբ, 2013 թվականի ապրիլի 11-12-ին, Երևանի «Բեստ Վեսթերն Կոնգրես» հյուրանոցում: Միջոցառումը դատական իշխանության անկախության և Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական իշխանության անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականներին նվիրված՝ ԺՀՄԻԳ-ի և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից Երևանում 2011 թվականի հունիսին կազմակերպված սեմինար-քննարկման տրամաբանական շարունակությունն էր:

Կառավարության, դատական իշխանության, խորհրդարանի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները տեսակետներ փոխանակեցին և կարծիքներ հայտնեցին այն մասին, թե ինչպես կարելի է Հայաստանում ընթացող դատական բարեփոխումները լավագույնս իրագործել իրավունքի գերակայության միջազգային չափանիշներին համահունչ: Արդարադատության նախարարությունը մասնակիցներին ներկայացրեց դատական իշխանության ինքնակառավարման մարմինների և դատարանների նախագահների դերերի բարեփոխման, կարգապահական վարույթների չափորոշիչները և ընթացակարգը փոփոխելու, դատավորների աշխատանքի գնահատման չափորոշիչների և ընթացակարգերի մշակման և արդարադատության նոր ակադեմիայի ստեղծման՝ կառավարության ծրագրերը:

Կառուցողական քննարկումների արդյունքում մշակվեցին և ընդունվեցին I, II և III նիստերի հետևյալ եզրակացությունները.

*I նիստ. Դատական վարչարարության և ինքնակառավարման համակարգի բարեփոխումները*

1. Որպես բոլոր դատավորների ներկայացվածությունն ապահովելու մեխանիզմ՝ ողջունելի համարվեց դատարանների նախագահների խորհրդի մի շարք լիազորությունների փոխանցում դատական ինքնակառավարման մեկ այլ կամ նորաստեղծ մարմնի:

2. Մասնակիցները համակարծիք էին առ այն, որ դատարանների նախագահների խորհուրդը միջազգային չափանիշների իմաստով դատական ինքնակառավարման մարմին չէ: Այնուհանդերձ, դատարանների նախագահների խորհրդի պահպանումը կարող է անհրաժեշտ լինել՝ որպես փոխզիջումային և անցումային տարբերակ դատական բարեփոխումների այս շրջափուլում:

3. Իրավաբանները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները պետք է հնարավորություն ստանան՝ հավուր պատշաճի մասնակցելու դատական ինքնակառավարման մարմինների վարույթներին, որպեսզի ապահովվի այդ մարմինների և ընդհանրապես դատական համակարգի գործունեության թափանցիկությունը և դրանց նկատմամբ հանրության վստահությունը: Դատական ինքնակառավարման մարմինների նիստերին հանրության մասնակցությունը կամ այդ նիստերի դիտարկումը հանրության կողմից սկզբունքորեն պետք է որ հնարավոր լինի:

4. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում սպասվող փոփոխությունների նախագիծը դատական ինքնակառավարման նոր մարմնի մասով լրացուցիչ հանրային քննարկման կարիք ունի՝ շահագրգիռ բոլոր սուբյեկտների, մասնավորապես՝ բոլոր ատյանների դատավորների և իրավաբանների հանրույթի ներգրավմամբ:

5. Գործնականում պետք է հաշվի առնել դատական ինքնակառավարման մարմիններում գենդերային հավասարակշռության ապահովման խնդիրը, որը Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով պահանջվում է ողջ դատական համակարգի համար:

6. Արդարադատության նախարարությունը մշակելու է դատարանների նախագահների պաշտոնավարման տևողության և ժամկետների թվաքանակի սահմանափակման վերաբերյալ առաջարկ՝ Ռազմավարությանը, գործող Սահմանադրությանը և միջազգային հանձնարարականներին համահունչ, և ներկայացնելու է առաջարկը վճռաբեկ դատարանին՝ դատական համակարգի հետ քննարկման նպատակով:

*II նիստ. Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերի և հիմքերի բարեփոխումը*

7. Ընդհանուր առմամբ ողջունվեց այն հանգամանքը, որ նախատեսվում է հստակորեն տարանջատել կարգապահական վարույթներ հարուցելու իրավասությունը և կարգապահական վարույթներով որոշումներ կայացնելու իրավասությունը՝ ապահովելով, որ միևնույն դատական մարմինը վարույթ հարուցելու և այդ վարույթով որոշում կայացնելու լիազորություն չունենա:

8. Որպես կանոն, օրենքի սխալ մեկնաբանումը, փաստերի սխալ գնահատումը և ապացույցների սխալ կշռումը դատավորների կողմից չպետք է պատժամիջոցների տեղիք տան: Այնուհանդերձ, եթե օրենսդրությամբ պահպանվելու է «օրենքի ակնհայտ և կոպիտ

խախտման» հիմքով կարգապահական վարույթ հարուցելու հիմքը, ապա այն պետք է հստակորեն սահմանել և մանրամասնորեն ամրագրել օրենքում:

9. Ավելի բարձր ատյանի դատարանի որոշումն այն մասին, որ դատավճիռը կայացվել է օրենքի ակնհայտ և կոպիտ խախտմամբ, չպետք է ինքնաբերաբար հանգեցնի դատավորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին որոշման կայացմանը:

10. Երբ Արդարադատության խորհուրդը կարգապահական վարույթի շրջանակում որոշում է, որ դատավճիռը կայացվել է օրենքի ակնհայտ և կոպիտ խախտմամբ, դա չպետք է ինքնաբերաբար հանգեցնի գործի վերաբացմանն այն դեպքերում, երբ դատավճիռն արդեն մտել էր վերջնական օրինական ուժի մեջ («*res judicata*»): Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 352-րդ հոդվածից զատ, ոչ քրեական գործերի շրջանակում թույլ տված խախտումների համար կարելի է դիտարկել արդարադատության «ձախողման» դեպքում իրավական պաշտպանության հնարավորությունը նախատեսելու տարբերակները:

11. Կարգապահական վարույթների շրջանակում Արդարադատության խորհրդի նիստերը պետք է դռնբաց լինեն, բացառությամբ երբ գործով անցնող դատավորը միջնորդում է, որպեսզի դրանք դռնփակ լինեն: ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության իրավունքի այլ տարրերը նույնպես պետք է ներդնել՝ կարգապահական վարույթների նկատմամբ կիրառելի միջազգային չափանիշներին համահունչ:

12. Սահմանադրության շրջանակներում անհրաժեշտ է դիտարկել Արդարադատության խորհրդի՝ կարգապահական վարույթներով կայացված որոշումները բողոքարկելու իրավունքն ընձեռելու նպատակահարմարությունը:

*III նիստ. Դատավորների աշխատանքի գնահատման օբյեկտիվ չափորոշիչների և ընթացակարգերի ներդրումը*

13. Ընդհանուր առմամբ ողջունելի համարվեցին դատավորների մասնագիտական առաջխաղացման որոշումների թափանցիկության և արդարացիության մակարդակի բարելավման նպատակով դատավորների աշխատանքի գնահատման համակարգ ձևավորելու ծրագրերը: Ակնկալվում է, որ այդ համակարգը կբարձրացնի դատավորների պատասխանատվության, ինչպես նաև՝ դատական համակարգի նկատմամբ հանրության վստահության մակարդակը:

14. Դատավորների աշխատանքի գնահատման համար ստեղծվելիք համակարգն ընդհանուր սկզբունքներով նկարագրվեցին որպես օբյեկտիվ (քանակական և որակական) չափորոշիչների վրա հիմնված և բողոքարկման իրավունք ընձեռող համակարգ: Կոնկրետ դատավորի դատավճիռների՝ ավելի բարձր ատյանների կողմից բեկանումների կամ փոփոխման ցուցանիշը պետք է չներառել դատավորի աշխատանքի գնահատման ցուցանիշների շարքում, բացառությամբ երբ այդ ցուցանիշը չափազանց բարձր է:

15. Դատավորի աշխատանքի գնահատումը պետք է օգտագործել միայն կառուցողական մոտեցմամբ՝ դատավորի աշխատանքը բարելավելու նպատակով, այլ ոչ՝ որպես պատժամիջոցներ կիրառելու հիմք:

16. Դատավորների դատավարական պաշտպանությունը (օրինակ՝ բացատրություն տալու կամ բողոքարկման իրավունքները) անհրաժեշտ է ներառել դատավորի աշխատանքի գնահատման համակարգում:

17. Բոլոր դատավորները պետք է մասնակցեն մասնագիտական աշխատանքի չափանիշների մշակմանը: Դատավարությունների մոնիթորինգին ներգրավված հասարակական կազմակերպությունները կարող են օգտակար տեղեկություններ հաղորդել դատավորների աշխատանքի գնահատման չափորոշիչների մշակման գործընթացում: Սկզբունքները պետք է ամրագրել օրենքում, իսկ որոշ տեխնիկական հարցեր կարող են մանրամասնեցվել ներքին իրավական կարգավորումներով:

18. Ցանկալի է հիմնվել դատավորի մասնագիտական գործունեության և աշխատանքի վերաբերյալ տեղեկությունների բազմաթիվ աղբյուրների վրա, ինչպես նաև՝ մշակել տվյալների ստացման պատշաճ և թափանցիկ մեխանիզմ: Տվյալների հավաքման նպատակը պետք է հստակ լինի: Տվյալների հավաքման մեթոդաբանությունը պետք է արդար և պարզ լինի՝ հիմնվելով մասնագիտական մեթոդների վրա: Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այն հարցին, թե որ սուբյեկտին են վերապահվելու տվյալների հավաքման, ֆորմալ մոնիթորինգի և գնահատման լիազորությունները: